ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՊԵՏԱԿԱՆԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ԿՁՄ-ՄԱԱՊՁԲ-11/20>>

ք. Եղեգաձոր <<26>> փետրվարի 2020 թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը ի դեմս գլխավոր բարտուղար Կ.Սահակյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝Պատվիրատու), մի կողմից, և <<Գագիկ Մհերյան>>ՍՊԸ-նի դեմս տնօրեն Գագիկ Մհերյան (այսուհետև՝Վաճառող), մյուս կողմից, որը դեկավարվում է ձեռնարկության կանոնադրության հիման վրա, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկականբնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են __10__ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __10__ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ

ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ՝ 212700(երկու հարյուր տասներկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ :

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարման ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2____ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___2___ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող՝ ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվելմինչևպայմանագրով այդժամկետըլրանալը՝Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որԳնորդիմոտչիվերացելապրանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցչավելքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __6__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
Վայոց Ձորի մարզպետարան ք Եղեգնաձոր ,Շահումյան -5 ՀՀՖին. Նախ. Գործառնական վարչ. հհ 900351051025 հվհհ 08907717 Գլխավոր բաղետորդ՝ Ա.ՄՈՒՀԱԿՅԱՆ	<<Գագիկ Մհերյան>> ՍՊԸ Ք. ԵղեգնաձորՆարեկացի 3 ԱՇԻԲ ,,Եղեգնաձոր,, մասնաճյուղ Հ/Հ2475800137500000 ՀՎՀՀ08908736 տնօրեն Գ.ՄՀԵՐՅԱՆ

Հավելված N

« 26 »փետրվարի2020թ. կնքված

ԿՁՄ-ՄԱԱՊՁԲ-11/20ծածկագրով պայմանագրի

Տնտեսական, սանիտարական և լվացմանմիջոցների

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի

չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքայինշանը	արտադրողը և ծագմաներկիրը	տեխնիկականբնութագիրը	չափմանմիավորը	միավորգինը/Հ Հ դրամ	ընդհանուրգինը/Հ Հ դրամ	ընդհանուրքանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակաքանակը	ժամկետը**
1	31685000-1	Էլ. երակարացման լար	,,Մակել,,Թուրքական	Երկարությունը 3 մ, 4 տեղանոց, 10A, 220-240 v առանց հողանցում	հատ	2500	37500	15	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	15	25.12.2020թ
2	39811300-1	Հոտազերտիչ օդի	,,ինկպրոմ,,ՌԴ	Օդիհոտավետհոտազերտիչ /աէրոզոլ/	հատ	350	4200	12	Քաղաք Եղեգնաձոր Շահումյան 5	12	25.12.2020թ

3	39812410-1	Կահույքի փայլեցնող միջոց	,,Մաքս,, Թուրքիա	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար աերոզոլային փաթեթվածքով;	հատ	500	5000	10	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	10	25.12.2020թ
4	39831245-1	օճառհեղուկ	,,Նաշ Սաղ,,ՀՀ	5լ տարայով, անվտանգությունը Սան Պին 1.2.681-97	լիտր	500	7500	15	Ք.Եղեգնաձոր Շահումյան	15	25.12.2020թ
5	39835000-1	Հատակ մաքրելու ձողափայտ	,,Թիթիզ,,Թուրքիա	1.5-2 մ երկարության, փայտե կամ պլաստմասսայե	հատ	1000	4000	4	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	4	25.12.2020թ
6	44521170-1	Դռան կողպեք	,,Էլբոտ,, ՌԴ	Դռան կողպեք ներդրովի բանալիներով ԳՕՍ 5089-2003 կամ համարժեք արտասահմանյան արտադրության	հատ	5000	40000	8	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	8	25.12.2020թ
7	44521200-1	Կողպեկների մասեր	,,Ռուխաա,, Չինաստան	Ներդրովի կողպեկի միջուկ 4 բանալիներով;	հատ	1200	12000	10	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	10	25.12.2020թ
8	18421130-1	Ձեռնոցներ	ՀՀ <<Արթիկ>>	Տնտեսական ձեռնոցներ,ռետինե անհարթ մակերեսով հեշտ օգտագործման համար, մեծ չափսի:	զույգ	300	15000	50	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	50	25.12.2020թ
9	19641000-1	Պոլիէթիլենային պարկ, աղբիհամար	<< Սիլկ Սոֆտ>> ՀՀ	Աղբիպոլիէթիլենայինտոպրակներ, սնկամգունավոր, աղբընհավաքելուհամար՝ ըստԳՕՍ 10354-82 կամհամարժեք	հատ	25	7500	300	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	300	25.12.2020թ
10	31321220-1	Էլեկտրականլար՝ 2*2.5մմ	<<Ինվի>> ՀՀ	Մոնտաժայինլարտարբերքան ակիմետաղալարնպղնձեկամանագապատպղնձեջղերով, պոլիվինիլքլորիդայինմեկուսացմամբկամանագապատպղնձեջղերովպոլիէթիլենայինմեկուսացմամբ, տարբերհատվածքներով, ըստԳՕՍ 17515-72	մետր	200	10000	50	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	50	25.12.2020թ

11	31531220-1	Էլեկտրական լամպ, 150W	„Տոռչ„Չինաստան	Էլեկտրականլամպ, 150W	հատ	200	4000	20	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	20	25.12.2020թ
12	33761400-1	Թղթե անձեռոցիկներ	<<Սոֆթ Թրեյդ>> ՀՀ	Անձեռոցիկսեղանի՝ երկշերտ, տարբերչափերի, թղթի 1 մ2 մակերեսիգանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոցտուփերով, փաթիուկթղթից:	հատ	500	15000	30	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	30	25.12.2020թ
13	39831280-1	Ապակի մաքրելու միջոց	<<Մեչտա>> ՀՀ	Մաքրող միջոց ապակե մակերևույթների համար, «BARF» ֆիրմայի կամ համարժեքը :	լիտր	450	4500	10	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	10	25.12.2020թ
14	39837000-1	ցախավել	ՀՀ	Բակըմաքրելուհամար, բնական, տեղականարտադրության, քաշըդորվիճակում (700-800) գ, երկարությունը՝ (85-90) սմ, ավլոդմասիլայնքը (50-60) սմ	հատ	650	6500	10	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	10	25.12.2020թ
15	42415500-1	շարժասանդուղքներ	<<Այլումենտ>> ՌԴ	Մետաղյանդոդվակից, անկյունակիցևմետաղաթիթեղից: 6 աստիճանից	հատ	15000	15000	1	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	1	25.12.2020թ
16	44411751-1	Սանհանգույցի բաքի պարագաներ	<<Նովա>> Թուրքիա	սանհանգույցիբաքիպարագաներպլաստմասից	հատ	3000	9000	3	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	3	25.12.2020թ
17	44511110-1	բահեր	ՀՀ	Բահ սուր և ուղղանկյուն եզրերով 24*27սմ, փայտյա պոչով	հատ	1800	7200	4	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	4	25.12.2020թ
18	44511170-1	փոցխեր	ՀՀ	Փոցխերփայտյապոչով	հատ	1700	3400	2	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	2	25.12.2020թ
19	44511270-1	մուրճեր	<<Բերենտ>> ՉԺՀ	25-30 սմ երկարությամբ փայտե պոչով ,բռնակը	հատ	1800	1800	1	Ք.Եղեգնաձոր	1	25.12.2020թ

				ոետինե հարմարանքով:					Շահումյան 5		
20	44511700-1	հարթաշուրթ	<<Բերենտ>> ՀԺՀ	Հարթաշուրթ միջին չափսի, մեկուսիչով	հատ	1800	3600	2	Ք.Եղեգնաձոր Շահումյան 5	2	25.12.2020թ

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի25-ը:*

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայոց Ձորի մարզ

ք Եղեգնաձոր ,Շահումյան -5

ՀՀՖին. Նախ. Գործառնական վարչ

hh 900351051025

հվhh 08907717

Գլխավոր բաժնուղար

---------- Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

<<Գագիկ Միրզոյան>>ՍՊԸ

Ք. Եղեգնաձոր,Նարեկացի 3

ԱՇԻՔ ,,Եղեգնաձոր,, մասնաճյուղ

2/22475800137500000

ՀՎՀՀ08908736

անվանում

---------- Գ.Միրզոյան

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Պատվիրատուիկողմից գնվելիքապրանքներիանվանումներ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Չափի միավորը	Միավորի գինը դրամ	Նախատեսվումէգնել 2020թըստեռամսյակների									
					I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյա		Ընդհամենը	
					քանակը	գինը	քանակը	գինը	Քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	Էլ. երկարացման լար	31685000-1	հատ	2500	1	2500	4	10000	4	10000	6	15000	15	37500
2	Հոտազերտիչ օդի	39811300-1	հատ	350	1	350	3	1050	3	1050	5	1750	12	4200
3	Կահույքի փայլեցնող միջոց	39812410-1	հատ	500	1	500	3	1500	3	1500	3	1500	10	5000
4	օճառհեղուկ	39831245-1	լիտր	500	1	500	4	2000	4	2000	6	3000	15	7500
5	Հատակ մաքրելու ձողափայտ	39835000-1	հատ	1000	1	1000	1	1000	1	1000	1	1000	4	4000
6	Դռան կողպեք	44521170-1	հատ	5000	2	10000	2	10000	2	10000	2	10000	8	4000
7	Կողպեկների մասեր	44521200-1	հատ	1200	1	1200	3	3600	3	3600	3	3600	10	1200
8	Ձեռնոցներ	18421130-1	հատ	300	5	1500	15	4500	15	4500	15	4500	50	1500
9	Պոլիէթիլենայինպարկ, աղբիհամար	19641000-1	հատ	25	30	750	90	2250	90	2250	90	2250	300	7500
10	Էլեկտրականլար՝ 2*2.5մմ	31321220-1	մետր	200	5	1000	15	3000	15	3000	15	3000	50	1000
11	Էլեկտրականլամպ, 150W	31531220-1	հատ	200	2	400	6	1200	6	1200	6	1200	20	4000
12	Թղթեանձեռոցիկներ	33761400-1	հատ	500	3	1500	9	4500	9	4500	9	4500	30	1500
13	Ապակիմաքրելումիջոց	39831280-1	լիտր	450	1	450	3	1350	3	1350	3	1350	10	4500
14	ցախավել	39837000-1	հատ	650	1	650	3	1950	3	1950	3	1950	10	6500
15	շարժասանդուղքներ	42415500-1	հատ	15000	1	15000							1	1500
16	Սանհանգույցիքաքիպարագաներ	44411751-1	հատ	3000			1	3000	1	3000	1	3000	3	9000
17	բահեր	44511110-1	հատ	1800			2	3600	2	3600			4	7200
18	փոցխեր	44511170-1	հատ	1700			1	1700	1	1700			2	3400

19	մուրճեր	44511270-1	հատ	1800	1	1800							1	1800
20	հարթաշուրթ	44511700-1	հատ	1800	1	1800	1	1800					2	3600

Հավելված N 2
«26»փետրվարի2020թ. կնքված
ՎՀՄ-ՄՍԱՊՁԲ-11/20ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
ՀՀդրամ

Ապրանքի

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	31685000-1	Էլ. երկարացման լար		3750	3750	13125	13125	13125	22500	22500	22500	37500	37500	37500	37500
2	39811300-1	Հոտազերտիչ օդի		420	420	1470	1470	1470	2520	2520	2520	4200	4200	4200	4200
3	39812410-1	Կահույքի փայլեցնող միջոց		500	500	1750	1750	1750	3000	3000	3000	5000	5000	5000	5000
4	39831245-1	օճառահեղուկ		750	750	2625	2625	2625	4500	4500	4500	7500	7500	7500	7500
5	39835000-1	Հատակ մաքրելու ձողափայտ		400	400	1400	1400	1400	2400	2400	2400	4000	4000	4000	4000
6	44521170-1	Դռան կողպեք		4000	4000	14000	14000	14000	24000	24000	24000	40000	40000	40000	40000
7	44521200-1	Կողպեկների մասեր		1200	1200	4200	4200	4200	7200	7200	7200	12000	12000	12000	12000
8	18421130-1	Ձեռնոցներ		1500	1500	5250	5250	5250	9000	9000	9000	15000	15000	15000	15000
9	19641000-1	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար		750	750	2625	2625	2625	4500	4500	4500	7500	7500	7500	7500

10	31321220-1	Էլեկտրական լար՝ 2*2.5մմ		1000	1000	3500	3500	3500	6000	6000	6000	10000	10000	10000	10000
11	31531220-1	Էլեկտրական լամպ, 150W		400	400	1400	1400	1400	2400	2400	2400	4000	4000	4000	4000
12	33761400-1	Թղթե անձեռոցիկներ		1500	1500	5250	5250	5250	9000	9000	9000	15000	15000	15000	15000
.13	39831280-1	Ապակի մաքրելու միջոց		450	450	1575	1575	1575	2700	2700	2700	4500	4500	4500	4500
14	39837000-1	ցախավել		650	650	2275	2275	2275	3900	3900	3900	6500	6500	6500	6500
15	42415500-1	շարժասանդուղքներ		1500	1500	5250	5250	5250	9000	9000	9000	15000	15000	15000	15000
16	44411751-1	Սանհանգույցի բաքի պլաստգաներ		900	900	3150	3150	3150	5400	5400	5400	9000	9000	9000	9000
17	44511110-1	բահեր		720	720	2520	2520	2520	4320	4320	4320	7200	7200	7200	7200
18	44511170-1	փոցխեր							1700	1700	1700	3400	3400	3400	3400
19	44511270-1	մուրճեր		180	180	630	630	630	1080	1080	1080	1800	1800	1800	1800
20	44511700-1	հարթաշուրթ		360	360	1260	1260	1260	2160	2160	2160	3600	3600	3600	3600

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայոց Ձորի մարզ
գ.Եղեգնաձոր ,Շահումյան -5
ՀՀՖին. Նախ. Գոլեմատեսության վարչ.
հհ 900351051025
հվհհ 08907717
Գլխավոր բարտուղար

Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

<<Գագիկ Մելքոնյան>>ԱՊԿ
Գ. Եղեգնաձոր Նարեկացի 3
ԱՇԻՄ ,,Եղեգնաձոր,, մասնաճյուղ
2/22475800137500000
ՀՎՀՀ08908736
Գ. Մելքոնյան

Հավելված 3
Ն ՎՁՄ-ՄԱԱՊՁԲ-11/20
գնման պայմանագրի
26 փետրվարի 2020թ

Պայմանագրիկողմ
_____
_____
գտնվելուվայրը _____
հհ _____
_____
հվհհ _____

Պատվիրատու
_____
_____
գտնվելուվայրը _____
հհ_____
_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, և
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի Ն եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցվածծառայությունների						
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
N ՎՁՄ-ՄԱԱՊՁԲ-11/20
գնման պայմանագրի
26փետրվարի 2020թ

ԱԿՏ N

պայմանագրիարդյունքըՊատվիրատուինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվումէ,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուիանունը Կատարողիանունը
(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն